

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» Քովիդ 19-ի արձանգաճի դրագիր

Ամփոփ հաշվետվություն
Դեկտեմբեր 2022 թ.

Բովանդակություն

Բովանդակություն.....	2
Նախաբան.....	3
Համագործակցությունը տեղական գործընկերների հետ.....	3
Ծրագրի համատեղ պլանավորումը	4
Իրականացված աշխատանքների ամփոփ ներկայացում.....	4
Սոցիալական բաղադրիչ	4
Բնապահպանական բաղադրիչ.....	6
Կտրոնների տունկ գետերի ավիամերձ տարածքներում	7
Գետերի ավիամերձ տարածքների մաքրում.....	10
Ծրագրի արդյունքների կայունությանն ուղղված միջոցառումներ.....	13
«Պատասխանատու եմ Սևանի համար» 1-ին միջոցառումը.....	13
«Թափոնի երկրորդ կյանքը» բացօթյա ցուցահանդես.....	13
Եզրակացություններ և առաջարկություններ	16
Եզրակացություններ	16
Առաջարկություններ.....	16
Հավելվածներ	17

Նախաբան

Հայաստանի հանրապետությունը 2020 թ.-ից ի վեր Կորոնավիրուսի համավարակի պատճառով բախվեց մի շարք բավականին լուրջ սոցիալ-տնտեսական դժվարությունների: 2020թ.-ին ՀՀ կառավարության կողմից մշակվեց և կյանքի կոչվեց շուրջ 20 միջոցառում՝ նպատակ ունենալով նվազեցնել և/կամ չեզոքացնել համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքները ՀՀ ազգաբնակչության շրջանում: Կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման միջոցառումներից էր նաև Միջոցառում 15-ը¹, որը ներառում էր նաև բնապահպանական դրական ազդեցություն: Այս միջոցառման շրջանակներում 2020 թ.-ի մայիս-հունիս ամիսներին տնկվեց շուրջ 2 մլն ուռենու կտրոն ՀՀ 7 մարզերի բարձրադիր հատվածների ավիամերձ հատվածներում /1800-2400 ԾՄԲ/:

«Գետերի ավիամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» ՔՈՎԻԴ-19-ի արձագանքման ծրագիրը նպատակ ուներ աջակցելու ՀՀ կառավարության 15-րդ միջոցառմանը և, զարգացնելով այն, ապահովել վերջինիս շարունակականությունը Գեղարքունիքի մարզում: Ծրագիրը տրամադրեց ժամանակավոր աշխատանք և եկամուտ այն մարդկանց, ովքեր առավելապես տուժել էին համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքներից, միաժամանակ լուծելով բնապահպանական խնդիրներ: Ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի մարզի բնակչության կողմից տնկվեցին ուռենու և բարդու կտրոններ Սևանա լիճ հոսող նախասնշված գետերի ավիամերձ տարածքներում, ինչպես նաև իրականացվեցին կոշտ թափոնների հավաքման աշխատանքներ գետափերից, գետաբերաններից և Սևանա լճի ավիամերձ տարածքներից: Այս միջոցառումները կարող են դրական ազդեցություն ունենալ կենսաբազմազանության, լանջերի պաշտպանության, ջրի որակի վրա, ինչպես նաև հանդիսանալ վառելափայտի աղբյուր երկարաժամկետ տեսլականում:

Ծրագիրը նախատեսված էր իրականացնել երկու փուլով՝ աշուն 2020 և գարուն 2021, սակայն պատերազմական գործողություններով պայմանավորված և անվտանգության նկատառումներից ելնելով ծրագիրը հետաձգվեց մինչև 2021 թվական: Ծրագիրն իրականացվել է 2021 թ.-ից մինչև 2022 թվականը:

Ծրագրի շահառու բնակավայրերի բնակիչներն, ովքեր տուժել էին համավարակի հետևանքով ներգրավվեցին տնկման և մաքրման աշխատանքներին և, ստանալով ֆինանսական փոխհատուցում կատարած աշխատանքների դիմաց, հնարավորություն ստացան որոշակիորեն մեղմել ընտանիքների ֆինանսական դժվարությունները:

Ի հավելումն, «Գետերի ավիամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» ՔՈՎԻԴ-19-ի արձագանքման ծրագիրը օժանդակում էր Եվրոպական Միության կողմից /EU4Sevan/ աջակցվող ՀՀ կառավարության նախաձեռնությանը ուղղված Սևանա լճի պաշտպանության բարելավմանը:

Համագործակցությունը տեղական գործընկերների հետ

Ծրագրի քաղաքական գործընկերը հանդիսանում էր ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը, որի հետ սերտ համագործակցության արդյունքում հնարավոր եղավ կյանքի կոչել Ծրագիրը: Ծրագրի իրականացմանն իր ազդեցիկ աջակցությունն ունեցավ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը: Ծրագրի իրականացումն ապահովվեց տեղական գործընկեր կազմակերպությունների կողմից՝ ի դեմս «Հայաստան ծառատունկ ծրագիր» բարեգործական հիմնադրամի (Էյ-Թի-Փի/ATP), «Շրջակա միջավայրի կայունության աջակցման կենտրոն» ՀԿ-ի (ՇՄԿԱԿ/ESAC), «Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» ՀԿ-ի (Այ-Էս-Էս-Դի/ISSD) և «Բլեջան» բնապահպանական, սոցիալական և բիզնեսի աջակցման ՀԿ-ի:

¹ Կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրեր. <https://www.gov.am/am/covid-19-cragrer/>

Ծրագրի համատեղ պլանավորումը



Նախքան Ծրագրի իրականացումը ծավալուն աշխատանք կատարվեց պլանավորման փուլում, որի նպատակով ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ ձևավորվեց աշխատանքային խումբ՝ ներգրավելով տարբեր շահագրգիռ կազմակերպությունների մասնագետների:

Ծրագրի պլանավորման, ինչպես նաև իրականացման տարբեր փուլերում կազմակերպվեցին մի շարք աշխատանքային հանդիպում-քննարկումներ աշխատանքային խմբի շրջանակներում, նպատակ ունենալով

բացատրել հնարավոր խնդիրները և հաղթահարել առկա մարտահրավերները: Ծրագրի պլանավորման փուլում ներգրավեցին նաև ափամերձ տարածքների վերականգնման և թափոնների վերամշակման գծով տեղական փորձագետներ:

Բազմաթիվ դաշտային այցելությունների և ուսումնասիրությունների արդյունքում փորձագետների կողմից ներկայացվեց Ծրագրի իրականացման համար նախընտրելի տեղամասերի աշխարհագրությունը, հնարավոր իրականացվելիք ծավալները, ինչպես նաև կազմվեցին մեթոդական ցուցումներ աշխատանքների արդյունավետ իրականացման համար:



Իրականացված աշխատանքների ամփոփ ներկայացում

Սոցիալական բաղադրիչ

Ծրագրի գլխավոր նպատակն էր հանդիսանում կարճաժամկետ աշխատանքով ապահովել Գեղարքունիքի մարզի հնարավորինս մեծ թվով բնակիչների, ովքեր տուժել էին համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքներից:

Ծրագրի թիրախային մոտեցումն ապահովելու նպատակով մասնակիցները ընտրվեցին նախապես մշակված 7 ընտրության չափորոշիչների հիման վրա, որոնք են՝

ՔՈՎԻԴ-19-ի հետևանքով

1. գրկվել են աշխատանքից
2. ունեն մինչև 18 տարեկան երեխա/ներ և/կամ կինս/ամուսինս գրկվել են աշխատանքից
3. կորցրել են ընտանիքիս կերակրողին
4. վարձու աշխատող են և ամբողջությամբ/մասնակիորեն կորցրել են աշխատանքս
5. անհատ ձեռնարկատեր են և ամբողջությամբ/մասնակիորեն կորցրել են աշխատանքս
6. կորցրել են աշխատանքս արտագնա աշխատանքի վայրում /արտերկրում/
7. ընտանիքիս անդամը/ները կորցրել են աշխատանքն արտագնա աշխատանքի վայրում

Ծրագրի տեղական իրականացնող կազմակերպությունների միջոցով հնարավոր եղավ ծրագրում ընդհանուր առմամբ ներգրավել Գեղարքունիքի մարզի 1012 բնակիչ, որոնցից 507 հոգի ուռեհու և բարդու կտրոնների տնկման աշխատանքներում, իսկ 505 հոգի՝ նախանշված գետերի առափնյա հատվածների մաքրման աշխատանքներում: Ազգաբնակչության ներգրավվածությունը ըստ միջոցառումների, շահառու բնակավայրերի և գետերի ներկայացված

Է աղյուսակ 1-ում:


Աղյուսակ 1. Ազգաբնակչության ներգրավվածությունը տնկման և մաքրման աշխատանքներին:

N	Իրականացնող ՀԿ	Խոշորացված համայնք	Շահառու բնակավայր	Ներգրավված բնակչություն, մարդ	Որից կանայք	
Ուռենու և բարդու կտրոնների տունկ						
1	«Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամ	Սևան	Ծովագյուղ (1)	11	9	
		Ֆավառ	Սարուխան (2)	33	18	
			Գեղարքունիք (3)	5	3	
			Մարտունի	Մաղինա (4) Գեղիովիտ (5) Վերին Գետաշեն (6)	34 121 33	16 70 17
Վարդենիս	Ախպրաձոր (7) Վարդենիս (8) Մեծ Մասրիկ (9)	27 28 13	5 4 1			
		Ընդամենը		305	143 (47%)	
2	«ԷՍԱԲ» ՀԿ	Մարտունի	Լիճք (10)	16	7	
			Ծովասար (11)	15	4	
			Մաղինա	25	5	
			Վերին Գետաշեն	8	6	
		Արծվանիստ (12)	58	14		
		Գեղիովիտ	80	44		
		Ընդամենը		202	80 (40%)	
		Ընդհանուր		507	223 (44%)	
Գետերի ափամերձ տարածքների մաքրում						
3.1	«Այ-Էս-Էս-Դի» ՀԿ Փուլ 1	Մարտունի	Լիճք	6	1	
			Ծակքար (13)	20	13	
			Գեղիովիտ	27	23	
			Մարտունի (14)	20	9	
		Ներքին Գետաշեն (15)	36	28		
		Վարդենիկ (16)	17	13		
		Արծվանիստ	27	10		
		Վարդենիս	Լուսակունք (17) Խաչաղբյուր (18) Կարճաղբյուր (19)	30 36 34	22 24 7	
		Ընդամենը		253	150 (59%)	
3.2	«Այ-Էս-Էս-Դի» ՀԿ Փուլ 2	Մարտունի	Ներքին Գետաշեն	50	33	
			Մարտունի	32	23	
		Ֆավառ	Սևան	Ծովագյուղ	22	22
			Սարուխան	27	11	
			Կարմիրգյուղ (20)	8	7	
			Լանջաղբյուր (21)	8	3	
			Ծաղկաշեն (22)	12	3	
			Գեղարքունիք	11	4	
			Նորատուս (23)	18	11	
			Ֆավառ (24)	41	26	
Գանձակ (25)	23	19				
		Ընդամենը		252	162 (64%)	
		Ընդհանուր		505	312 (62%)	
		Ամբողջը միասին (4)	25	1012	535 (53%)	

Աղյուսակ 1ա. Բնակչության ներգրավվածությունը ամփոփ:

N	Խոշորացված համայնք (Բնակավայրերի թիվը)	Տնկում (Կանայք, %)	Մաքրում (Կանայք, %)	Ընդամենը (Կանայք, %)
1	Սևան (1)	11 (9, 82%)	22 (22, 100%)	33 (31, 94%)
2	Գավառ (8)	38 (21, 55%)	148 (84, 57%)	186 (105, 56%)
3	Մարտունի (10)	390 (183, 47%)	235 (153, 65%)	625 (336, 54%)
4	Վարդենիս (6)	68 (10, 15%)	100 (53, 53%)	168 (63, 38%)
	Ընդհանուր (25)	507 (223, 44%)	505 (312, 62%)	1012 (535, 53%)

Գծապատկեր 1. Ներգրավված բնակչության աշխարհագրությունը ըստ խոշորացված համայնքների:



Ծրագրի շնորհիվ Գեղարքունիքի մարզի 1012 բնակիչ հնարավորություն ստացավ 5-ից 7 աշխատանքային օրերի ընթացքում վատակել 50,000-ից մինչև 93,000 դրամ մաքուր եկամուտ՝ կախված կատարած աշխատանքից և ծավալից:

Բնապահպանական քաղաքիչ

Չնայած նրան, որ ծրագրի գլխավոր նպատակը համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմումն էր, ծրագիրը նաև ուղղված էր մի շարք բնապահպանական խնդիրների լուծմանը: Այսպիսով «Գետերի ավիամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» ԲՈՎԻԴ-19-ի արձագանքման ծրագիրը ձեռնամուխ եղավ Սևանա լճի և ավազանի Էկոհամակարգի բարելավմանն ուղղված երկու միջոցառումների իրականացմանը:




Կտրոնների տնկման գետերի ավիամերձ տարածքներում

Տնկատեղամասերի ընտրության չափորոշիչները

Կտրոնների տնկման արդյունավետությունն ու կայունությունն ապահովելու նպատակով սահմանվեցին տնկատեղամասերի ընտրության չափորոշիչներ, համաձայն որոնց իրականացվեցին դաշտային ուսումնասիրությունները՝ համապատասխան տեղամասերի ընտրության նպատակով: Սահմանված չափորոշիչները ներկայացված են ստորև.

- Բացառել նախաքարշի ճանապարհների հետ հատվող տեղամասերը, կամ թողնել ապահով լայնությամբ միջանցքներ,
- Բացառել գետի երկայնքով նախաքարշի ճանապարհի հանդիսացող հատվածների ներառումը,
- Բացառել ինտենսիվ արածեման տարածքներ հանդիսացող հանդամասերին հարակից տեղամասերը, /օր. ազատ պահվածքով ինտենսիվ արածեցման արոտավայրեր/
- Բացառել օրինական կամ ոչ օրինական գյուղ. նշանակության հողօգտագործման տարածքների ընդգրկումը կամ կանխավ համայնեցնել հողօգտագործողների հետ,
- Գյուղ. նշանակության հողատարածքների հարակից հատվածներում չգերազանցել 2մ տնկման գոտին,
- Երկար տնկատեղամասերի պարագայում նախատեսել միջանցքներ, կենդանիների և մարդկանց անարգել մուտքը դեպի ջուրը ապահովելու համար, միջանցքները նախապես համաձայնեցնելով համայնքների պատասխանատուների հետ,
- Բացառել խոտհարքներ հանդիսացող տարածքները, նախապես ներկայացնելով նախընտրված տարածքները համայնքապետարանի աշխատակիցներին,
- Համայնքապետերի միջոցով ներկայացնել աշխատանքները բնակչությանը և դիմել, որպեսզի չվնասեն մեկ մետր գոտիավորումը:

Ուռենու և բարդու կտրոնների տնկման աշխատանքների համար դաշտային ուսումնասիրությունների և համայնքային հանդիպումների արդյունքում ընտրվեցին Սևանա լիճ հոսող թվով 6 գետեր՝ Գավառագետ, Ծակքար, Արգիճի, Արծվանիստ, Կարճաղբյուր և Մասրիկ գետերը: Վարչատարածքային առումով շահառու համայնքներ հանդիսացան թվով 11 բնակավայր՝ Մարուխան, Գեղարքունիք, Ծովասար, Լիճք, Գեղիովիտ, Վերին Գետաշեն, Մաղինա, Ախարածոր, Արծվանիստ, Մեծ Մասրիկ բնակավայրերը և Վարդենիս քաղաքը (Տես՝ Քարտեզ 1):



Քարտեզ 1. Տնկման աշխատանքների համար ընտրված գետերը և շահառու համայնքները.

Տեսակաչարի ընտրությունը

2020-2021 թթ.-ներին Սևանի ջրահավաք ավազանում տնկումներ կատարելու նպատակով ուսումնասիրվել էին ավազանի բարձրակարգ բույսերի ծառաթփային կազմը և բուսականությունը: Արդյունքում արձանագրվել էին 152 տեսակ ծառեր, թփեր, թփիկներ և կիսաթփեր, որոնք աճում են ուսումնասիրված տարածքում: Հետագուովեցին նշված 152 բուսատեսակների կենսաձևերը, Էկոլոգիական առանձնահատկությունները, տեսակների օգտագործումը ծառապատման և անտառապատման նպատակով:

Այնուհետև դաշտային ուսումնասիրությունների հիման վրա նշված 152 տեսակներից առանձնացվեցին ուռենու 5 և բարդու 1 տեսակի կտրոն՝ տունկ իրականացնելու նպատակով: Ստորև ներկայացված են տնկման աշխատանքներում օգտագործված ուռենու և բարդու տեսակները:



Ուռենի սպիտակ



Ուռենի հայ-ռուսական



Ուռենի Էլբուրսյան



Ուռենի բարձր




Ուռենի եռառեջ



Բարդի սպիտակ

Տնկման աշխատանքների մեթոդաբանությունը

Տնկման աշխատանքների պատշաճ իրականացման նպատակով անտառագետ-փորձագետի կողմից մշակվեց տնկման աշխատանքների մեթոդաբանությունը ուղեցույցի տեսքով (հավելված 1.), ինչի հիման վրա կազմակերպվեցին տնկման աշխատանքներում ներգրաված բնակիչների ուսուցումները:



Սխեմա 1. Կտրոնների տնկման կարգը և ձևերը:

Այսպիսով, 2021 թ.-ի գարնանը Գավառագետ, Արգիճի, Կարճաղբյուր և Մասրիկ գետերի վերին հոսանքների առափնյա տարածքներում տնկվեցին 52000 ուռենու կտրոն, իսկ աշնանը՝ Ծակբար, Արգիճի և Արծվանիստ գետերի ափամերձ տարածքներում 381200 ուռենու և 100000 բարդու կտրոններ: Ընդհանուր առմամբ տնկվեց ավելի քան 1 մլն ուռենու և բարդու կտրոն՝ ծածկելով շուրջ 46 հա տարածք և ձգվելով շուրջ 305 կմ գետերի երկայնքով:




Տնկման աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Տնկման աշխատանքների բաշխվածությունը ըստ գետերի:

	Գետեր	Շահառու համայնքներ	Տնկված 1 փուլ (կմ)	Տնկված 2 փուլ (կմ)	Ընդամենը տնկված (կմ)	Ընդամենը տնկված (հա)	Տնկված կտրոնները
1	Գավառագետ	Մարուխան, Գեղարքունիք	0	29	29	4.5	69.600
2	Ծակբար	Լիճք, Ծովասար	10	10	20	1	32.000
3	Արգիճի	Լիճք, Վերին Գետաշեն, Մադինա, Գեղիովիտ	33	152	185	29	662.300
4	Արծվանիստ	Արծվանիստ	0	31	31	3	100.800
5	Կարճաղբյուր	Ախպրաձոր	0	13	13	3	50.500
6	Մասրիկ	Վարդենիս, Մեծ Մասրիկ	3	24	27	5.5	86.000
	Ընդամենը	11	46	259	305	46	1.001.200

Ինչպես երևում է գծապատկեր 2-ում, տնկված կտրոնների շուրջ 66%-ը տնկվել է Սևանա լիճը սնուցող ամենամեծ ջրհավաք ավազան ունեցող Արգիճի գետի վերին հոսանքներում:

Գծապատկեր 2. Տնկված կտրոնների բաշխվածությունը ըստ գետերի:




Գետերի ափամերձ տարածքների մաքրում

Մաքրման ենթակա տեղամասերի ընտրությունը

Մաքրման աշխատանքների արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև արդյունքների կայունության ապահովման նպատակով սահմանվեցին մաքրման ենթակա տեղամասերի ընտրության չափորոշիչները.

- Ազդեցության մակարդակ
- Աղտոտվածության մակարդակ
- Հասանելիության մակարդակ
- Անվտանգության մակարդակ
- Շահառու բնակավայրի կողմից համագործակցելու և պահպանելու պատրաստակամության մակարդակ
- Առանց լրացուցիչ մեքենամեխանիզմների կիրառմամբ գետերի մաքրման հնարավորություն

Համաձայն վերոնշյալ չափորոշիչների դաշտային այցելությունների արդյունքում հատկորոշվեցին թվով 10 գետ՝ Ձկնագետ, Գավառագետ, Ծակքար, Լիճք, Արգիճի, Մատունի, Վարդենիս, Արծվանիստ, Կարճաղբյուր և Մասրիկ գետերը: Վարչատարածքային առումով շահառու համայնքներ հանդիսացան թվով 19 բնակավայր՝ Ծովագյուղ, Նորատուս, Կարմիրգյուղ, Ծաղկաշեն, Սարուխան, Գանձակ, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Ծակքար, Լիճք, Ներքին Գետաշեն, Գեղիովիտ, Վարդենիկ, Արծվանիստ, Կարճաղբյուր, Լուսակունք և Խաչաղբյուր բնակավայրերը, ինչպես նաև Գավառ և Մարտունի քաղաքները (Տես՝ Քարտեզ 2):



Քարտեզ 2. Մաքրման աշխատանքների համար ընտրված գետերը և շահառու համայնքները.



Գետերի ափամերձ տարածքների մաքրման աշխատանքները բաժանվեցին երկու փուլի՝ 2021թ.-ի գարուն-ամառ/փուլ 1/ և աշուն/փուլ 2/: Փուլ 1-ի ընթացքում մաքրման աշխատանքներ իրականացվեցին Սևանա լիճ հոսող 8 գետերի առափնյա հատվածներում, որի արդյունքում 10 շահառու բնակավայրերի բնակիչների կողմից հավաքվեց ընդհանուր առմամբ 234609կգ կոշտ թափոն, որից վերամշակման ենթակա 238կգ պլաստիկ և 41կգ ապակե թափոն: Փուլ 2-ի

շրջանակներում մաքրման աշխատանքներն հիմնականում տարածվեցին ևս 2 գետերի առափնյա հատվածներում, որի արդյունքում ևս 9 շահառու բնակավայրերի բնակիչների կողմից հավաքվեց 141541կգ կոշտ թափոն, այդ թվում վերամշակման ենթակա 631կգ պլաստիկ և 197կգ ապակե թափոն:

Այսպիսով մաքրման աշխատանքների երկու փուլերի արդյունքում աշխատանքներին ներգրավելով 505 բնակչի, հնարավոր եղավ հավաքել 376150կգ կոշտ թափոն, այդ թվում վերամշակման ենթակա 869կգ պլաստիկ և 238կգ ապակե թափոն:

Մաքրման աշխատանքների համապարփակ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 3-ում:



Աղյուսակ 3. Մաքրման աշխատանքների ծավալներն ըստ շահառու բնակավայրերի և գետերի:

	Շահառու բնակավայրերը	Գետերը	Վերամշակելի պլաստիկ (կգ)	Վերամշակելի ապակի (կգ)	Այլ կոշտ թափոն (կգ)	Ընդհանուր թափոն (կգ)
1	Ծովագյուղ	Ձկնագետ	50	6	10439	10495
2	Նորատուս	Գավառագետ	68	8	12209	12285
3	Գավառ	Գավառագետ	95	12	19884	19991
4	Կարմիրգյուղ	Գավառագետ	18	5	5207	5230
5	Ծաղկաշեն	Գավառագետ	47	18	6154	6219
6	Սարուխան	Գավառագետ	20	43	22178	22241
7	Գանձակ	Գավառագետ	46	9	12243	12298
8	Լանջաղբյուր	Գավառագետ	43	16	4231	4290
9	Գեղարքունիք	Գավառագետ	30	12	5800	5842
10	Ծակքար	Ծակքար	60	0	7962	8022
11	Լիճք	Լիճք	10	0	4038	4048
12	Մարտունի	Մարտունի	151	53	42423	42627
13	Գեղիովիտ	Մարտունի	5	2	11890	11897
14	Ներքին Գետաշեն	Արգիճի	142	40	62379	62561
15	Վարդենիկ	Վարդենիս	40	14	7509	7563
16	Արծվանիստ	Արծվանիստ	34	0	54517	54551
17	Կարճաղբյուր	Կարճաղբյուր	4	0	25129	25133
18	Լուսակունք	Մասրիկ	6	0	33605	33611
19	Խաչաղբյուր	Մասրիկ	0	0	27246	27246
	19	10	869	238	375043	376150


Աղյուսակ 3ա. Մաքրման աշխատանքները ըստ գետերի

	Գետեր	Շահառու բնակավայրեր	Վերամշակելի պլաստիկ (կգ)	Վերամշակելի ապակի (կգ)	Այլ կոշտ թափոն (կգ)	Ընդհանուր թափոն (կգ)
1	Ձկնագետ	Ծովագյուղ	50	6	10439	10495
2	Գավառագետ	Նորատուս, Գավառ, Կարմիրգյուղ, Ծաղկաշեն, Սարուխան, Գանձակ, Լանջաղբյուր, Գեղարքունիք	367	123	87906	88396
3	Ծակքար	Ծակքար	60	0	7962	8022
4	Լիճք	Լիճք	10	0	4038	4048
5	Մարտունի	Մարտունի, Գեղիովիտ	156	55	54313	54524
6	Արգիճի	Ներքին Գետաշեն	142	40	62379	62561
7	Վարդենիս	Վարդենիկ	40	14	7509	7563
8	Արծվանիստ	Արծվանիստ	34	0	54517	54551
9	Կարճաղբյուր	Կարճաղբյուր	4	0	25129	25133
10	Մասրիկ	Լուսակունք, Խաչաղբյուր	6	0	60851	60857
	10	19	869	238	375043	376150

Հարկ է նշել, որ մաքրման համար ընտրված գետերը հնարավոր չէր ամբողջությամբ մաքրել կոշտ թափոններից, հաշվի առնելով հասանելիության և անվտանգության հարցերը, ինչի արդյունքում որոշ դեպքերում ունենք ոչ ամբողջական մաքրման պատկեր:

Ստորև ներկայացված գծապատկերից /Գծապատկեր 3./ ակնառու է դառնում Սևանա լիճ հոսող ծրագրում ընգրկված գետերի աղտոտվածության աստիճանը:

Գծապատկեր 3. Հավաքված թափոնների բաշխվածությունը գետերի:



Կոշտ թափոններով աղտոտվածության տեսանկյունից առավել ճգնաժամային էին Գավառագետ, Արգիճի, Մարտունի, Մասրիկ և Արծվանիստ գետերի առափնյա հատվածները, որոնցից հավաքված կոշտ թափոնների ծավալը կազմել է ամբողջ մաքրման աշխատանքների շուրջ 85%-ը:

Ծրագրի արդյունքների կայունությանն ուղղված միջոցառումներ

Ծրագրի հիմնական բաղադրիչների՝ կտրոնների տնկման և ափամերձ տարածքների մաքրման աշխատանքների արդյունավետությունը ապահովելու նպատակով ծրագրի շահառու բոլոր 1012 բնակիչները մասնակցել են տեսական և գործնական դասընթացների, նախքան աշխատանքների սկսվելը՝ մանրամասն տեղեկացվելով աշխատանքների կատարման մեթոդիկային և կարևորությանը:

Բացի վերոնշյալ դասընթացներից ծրագրի իրականացումն ապահովող տեղական կազմակերպությունների կողմից իրականացվել են մի շարք հանրային իրազեկման միջոցառումներ և դասընթացներ:

«Պատասխանատու եմ Սևանի համար» 1-ին միջոցառումը.

2021թ.-ի մայիսի 20-ին Գեղարքունիքի մարզի Արծվանիստ բնակավայրի Սևանա լճի առափնյա տարածքում կազմակերպված «Պատասխանատու եմ Սևանի համար» բացօթյա միջոցառման և համատեղ շրջայցի շրջանակներում ի թիվս այլ արդյունքների ներկայացվեցին նաև կտրոնների տնկման և գետերի ափամերձ տարածքների մաքրման աշխատանքների ընթացիկ արդյունքները և կազմակերպվեց հակիրճ դասընթաց թափոնների վերամշակման վերաբերյալ: Միջոցառման հյուրերը և բնակիչներն իրենց ներդրումն ունեցան Արծվանիստ գետի գետաբերանի հատվածի մաքրման աշխատանքներում:



«Թափոնի երկրորդ կյանքը» բացօթյա ցուցահանդես



Թափոնների վերամշակման հետ կապված կազմակերպվել էին դասընթացներ հետևյալ թեմաներով՝ «Թափոնը որպես եկամուտի նոր աղբյուր», «Բնությունը և ես» և «Թափոնի նոր կյանքը»: Ընդհանուր առմամբ այս դասընթացներին մասնակցել էին Գեղարքունիքի մարզի 262 բնակիչ: 2021 թ.-ի հուլիսի 16-ին դասընթացների առաջին արդյունքները ներկայացվեցին «Թափոնի երկրորդ կյանքը» խորագրով կազմակերպված բացօթյա ցուցադրության ընթացքում Արծվանիստ բնակավայրում, որի հիմնական նպատակն էր, դասընթացների արդյունքում ձեռք բերած գիտելիքներով և ցուցադրության միջոցով ներկայացնել վերամշակվող թափոններից պատրաստված տարատեսակ իրերը, զարդերը և ձևավորումները: Ցուցադրության ժամանակ ներկայացվեցին նաև մաքրման աշխատանքների ընթացքում հայտնաբերված «զանձերը»՝ արդուկ, թեյնիկ, ջահ, մեքենայի հայելի, հեծանիվ և այլն: Խաղարկային եղանակով փորձ արվեց բացահայտել թե որ «զանձը», որ գետից կամ բնակավայրի տարածքից է հատնաբերվել:

«Թափոնարվեստ» առցանց բաց մրցույթ

2022թ.-ի գարնանը կազմակերպվեց նաև առցանց բաց մրցույթ «Թափոնարվեստ» խորագրով, որին մասնակցեցին Գեղարքունիքի մարզի 46 բնակիչ, ներկայացնելով իրենց աշխատանքները՝ պատրաստված վերամշակվող թափոններից: Պատրաստված իրերն ու զարդերը ցուցադրության միջոցով ներկայացվեցին 2022թ.-ի ապրիլի 20-ին Գեղարքունիքի մարզպետարանում կազմակերպված «Պատասխանատու եմ Սևանի համար» 2-րդ միջոցառման շրջանակներում: Մրցույթի հաղթող երկու մասնակիցները պարգևատրվեցին խրախուսական նվերներով:



«Թափոնարվեստ» ցուցահանդես-վաճառք

Վերամշակման ենթակա թափոններից պատրաստված զարդերի և պարագաների ամփոփիչ ցուցահանդես վաճառքը կազմակերպվեց 2022թ.-ի մայիսի 21-ին Երևանի Բուսաբանական Այգի/Ինստիտուտի տարածքում: Ցուցահանդեսին ներկայացվեցին ավելի քան 83 մասնակցի աշխատանքներ Գեղարքունիքի, Շիրակի մարզերից և Երևանից: Միջոցառումը լուսաբանվեց Հանրային հեռուստատեսության, Գեղամա հեռուստաընկերության և տարբեր տեղեկատվական հարթակների միջոցով:



Թափոնների վերամշակման մշակույթը տարածելու նպատակով ծրագրի շրջանակներում Գավատ խոշորացված համայնքի բնակավայրերի մի շարք դպրոցներում տեղադրվել են 200-ից ավելի տեսակավորման տարաներ պլաստիկի և թղթե թափոնների հավաքման համար:

Գետերի ափամերձ տարածքներում տնկված ուռենու և բարդու կտրոնների աճի և պահպանության նպատակով շահառու բնակավայրերի շուրջ 100 հողօգտագործողների շրջանում անցկացվել են դասընթացներ «Անտառաշերտերի Էկոհամակարգային դերը» վերնագրով:

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» Քովիդ 19-ի արձագանքման միջոցառման արդյունքների ամփոփում




«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» Քովիդ 19-ի արձագանքման միջոցառման ամփոփիչ արդյունքները ներկայացվեցին 2022 թ.-ի հուլիսի 1-ին կազմակերպված «Չանքերի միավորում՝ հանուն Սևանա լճի էկոհամակարգի պահպանման և կայուն զարգացման» խորագրով միջազգային համաժողովի ընթացքում: Ընդհանուր առմամբ կտրոնների տնկման և գետերի ափամերձ տարածքների մաքրման աշխատանքներում ներգրավվեցին Գեղարքունիքի մարզի 25 բնակավայրի 1012 բնակիչ: Սևանա լիճը սնուցող 6



գետերի երկայնքով տնկվեցին շուրջ 1 միլիոն ուռենու և բարդու կտրոններ: Տնկված կտրոնները մեծամասամբ ցուցաբերեցին բարձր ծլունակություն, ինչը պայմանավորված էր տնկատեղամասերի ճիշտ ընտրությամբ և աշխատանքի որակով:

Սևանա լիճը սնուցող 10 գետերից մաքրվեց ավելի քան 376 տոննա կոշտ կենցաղային թափոն: Հավաքված թափոններից շուրջ 1107 կգ վերամշակման ենթակա պլաստիկը և ապակին տեղափոխվեցին վերամշակման արտադրամասեր, իսկ մնացած չվերամշակվող թափոնը համայնքապետարանների ջանքերով տեղափոխվեցին համապատասխան աղբավայրեր:



Եզրակացություններ և առաջարկություններ

Եզրակացություններ

Սոցիալ-տնտեսական և բնապահպանական բաղադրիչների համադրմամբ «Գետերի ափամերձ տարածքների վերականգնում հայաստանում» ՔՈՎԻԴ-19-ի արձագանքման ծրագիրը բավականին լավ ընկալվեց և ողջունվեց գյուղական բնակչության, ինչպես նաև բնակավայրերի ղեկավարների կողմից: Բնակչությունը, առավելապես ՔՈՎԻԴ-19-ի հետևանքով սոցիալապես տուժած հատվածը, մոտիվացված կերպով ներգրավվեց ծրագրի գործողությունների իրականացման գործընթացում: Չնայած ծրագրի նպատակը բավականին լուրջ բնապահպանական խնդիրների լուծումն էր, բայց և այնպես գործողությունները մշակված էին հնարավորինս մատչելի ձևով, ինչը հնարավորություն տվեց բնակչության ավելի լայն շերտին ներգրավված լինել աշխատանքներին:

Ծրագրի շրջանակներում հնարավոր եղավ ստեղծել 1012 ժամանակավոր աշխատատեղ Գեղարքունիքի մարզի գյուղական բնակչության համար, ինչը հնարավորություն տվեց որոշակիորեն մեղմելու ՔՈՎԻԴ-19-ի սոցիալ-տնտեսական հետևանքները՝ ապահովելով կարճ ժամանակում եկամուտ ստանալու հնարավորությունը: Միևնույն ժամանակ փորձ արվեց նպաստել Սևանա լճի, մասնավորապես լիճ հոսող գետերի բնապահպանական վիճակի բարելավմանը՝ ափամերձ տարածքների վերականգնման և կոշտ թափոններից մաքրման եղանակով:

Առաջարկություններ

Գետերի ափամերձ տարածքներում կտրոնների տնկման և մաքրման աշխատանքները կազմակերպած և իրականացրած տեղական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները թվարկված են ստորև.

- Հաճախակի կազմակերպել բնապահպանական բնույթի հանրային իրազեկման միջոցառումներ, գործնական դասընթացներ գյուղական բնակչության, մասնավորապես երիտասարդության շրջանում,
- Նմանատիպ ծրագրերի պլանավորման փուլում կազմակերպել հնարավորինս բաց և լայն շրջանակ ընդգրկող մասնագիտական քննարկումներ,
- Բնակչության շրջանում հանրային իրազեկման միջոցառումներում ներգրավել կրթական հաստատություններին,
- Դաշտային ուսումնասիրությունները սկսել ծրագրի գործնական մեկնարկից առնվազն երեք ամիս առաջ, հաշվի առնելով բնապահպանական ծրագրերի սեզոնայնությունը,
- Ծրագրի ավարտից հետո ռիսկային տեղամասերում տեղադրել նահազգուշացնող, տեղեկացնող տեղեկատվական վահանակներ,
- Իրականացնել թափոնների կառավարմանը և վերամշակմանն ուղղված միջոցառումներ:

Հավելվածներ

Հավելված 1. Տնկման աշխատանքների համառոտ ուղեցույց

1. ՏՆԿՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԽԵՄԱՆԵՐԸ

1.1. Ուռենիների կտրոնների հավաքը, նախապատրաստումը

Ուռենիների կտրոնները վերցվում են անմիջապես տնկումներից առաջ: Կտրոնների մեծ մասը վերցվում են համանուն գետերի հովիտներից, կամ Նոյն գետերի գետաբերանային հատվածներից, որտեղ ուռենիների բուսատեսերը լիովին բավարարում են պահանջվող քանակները:

Կտրոնները սկզբից հավաքվում են ճյուղերով, ապա կապվում են խրձերով՝ յուրաքանչյուրը՝ մինչև 50 հատ: ճյուղերը պետք է լինեն փայտացած, ըստ երկարության 50-ից 210 սմ, հիմքերում կարող են ունենալ 0.8-3.0 սմ տրամագիծ (Նկար 1):

Այս ճյուղերից կտրվում են համապատասխան երկարության կտրոնները, փաթեթավորվում 50-100-ական հատ և տեղափոխվում տնկման վայրը (Նկար 2):

Կտրոնները պետք է ունենան 25-40 սմ (Կառավարության 2020թ. N 749-լ որոշում), իսկ երկար միջհանգույցներ ունեցող ընձյուղների դեպքում՝ մինչև 50 սմ երկարություն և 0.8-2(3) սմ տրամագիծ, ունենան առնվազն 4-5 անջարտողք (Նկար 2):



Նկար 1. 50-ից 210 սմ երկարության ճյուղերի խուրձը



Նկար 2. 40 սմ երկարության կտրոնների խուրձը

1.2. Ուռենիների՝ տնկման համար նախատեսված տեսակները

Քանի որ ուռենիների որոշ տեսակներ դժվարությամբ են արմատակալվում կտրոններով (Նկար 7-8), անհրաժեշտ է տարբերել դրանք բնության մեջ և կտրոններ վերցնել միայն հեշտ արմատակալվող տեսակներից (Նկար 3-6): Տնկումների համար նախատեսված տեսակները տարբերվում են ոչ ցանկալի, դժվար արմատակալվող տեսակներից՝ ճյուղերի և ընձյուղների բարակությամբ և բողբոջների փոքրությամբ:

Նկար 3 և 4-ում համեմատության համար պատկերված են տնկումների համար առաջարկված տեսակների վեգետատիվ (առանց ծաղկային բողբոջների) ընձյուղները, որոնք նկատելիորեն բարակ են Նկար 7-ում պատկերված, տնկումների համար ոչ ցանկալի Այծուռենի տեսակի վեգետատիվ ընձյուղից:



Նկար 3. Տնկումների համար առաջարկված Ուռենի եռառեղ (Salix trinadra) տեսակի վեգետատիվ ընձյուղը



Նկար 4. Տնկումների համար առաջարկված Ուռենի էլբուրիսի (Salix elbursensis) տեսակի վեգետատիվ ընձյուղը



Նկար 5. Տնկումների համար առաջարկված Ուռենի էլբուրիսի (Salix elbursensis) տեսակի գեներատիվ ընձյուղը



Նկար 6. Տնկումների համար առաջարկված Ուռենի հայ-ուսական (Salix armeno-rossica) տեսակի գեներատիվ ընձյուղը

Նկար 5 և 6-ում պատկերված են տնկումների համար առաջարկված տեսակների գեներատիվ կամ ծաղկող ընձյուղները, որոնք նկատելիորեն բարակ են, իսկ բողբոջները նկատելիորեն փոքր են:

1.3. Ուռենիների՝ տնկման համար անընդունելի տեսակները



Նկար 7. Տնկումների համար ոչ ցանկալի Այծուռենի (Salix caprea) տեսակի վեգետատիվ ընձյուղը



Նկար 8. Տնկումների համար ոչ ցանկալի Այծուռենի (Salix caprea) տեսակի գեներատիվ ընձյուղը

1.4. Ուռենիների վարակվածությունը

Ուռենիների կտրոնները մթերելու ընթացքում հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել վարակված և հիվանդ ճյուղերին (Նկար 9), ընտրելով միայն առողջ ճյուղեր:




Նկար 9. ա, բ. Ուռենու վարակված ճյուղերը Ուռենու վահանակիր (Chionaspis saïcis) տեսակի միջատով



1.5. Ուռենիների կտրոնների բողբոջների դիրքը, տնկումը

Կտրոնները տնկվում են անմիջապես փափուկ հողի մեջ խրելու մեթոդով կամ, եթե հողը համեմատաբար ամուր է ու քարքարոտ՝ մետաղյա ձողերով անցքեր բացելու և կտրոնն այնտեղ տեղադրելու միջոցով (Նկար 10-13): Կտրոնները պետք է տնկվեն աճման ուղղությամբ դեպի վեր՝ երկու երրորդով հողի մեջ և մեկ երրորդով հողից դուրս, այնպես, որ 2 աչքաբողբոջ մասն վերևում (Կառավարության 2020թ. N 749-լ որոշում): Կտրոնները կարելի է տնկել ուղղահայաց կամ թեքությամբ՝ 50-70° անկյան տակ (Նկար 10, 11):




Նկար 10. Կտրոնների տնկման ձևերը (ուղղահայաց)




Նկար 11. Կտրոնների տնկման ձևերը (թեքությամբ)

Փափուկ հողերում կտրոնները մեկ հարվածով խրվում են գրունտի մեջ կամ հատուկ խողովակի միջոցով հասցվում անհրաժեշտ խորության (Նկար 12, ա-դ):



Նկար 12. Փափուկ հողերում տնկումը մետաղյա խողովակի միջոցով (ա. մետաղյա խողովակը՝ բռնակով, բ. խողովակը և ուռենու կտրոնը, գ. կտրոնի մեկ երրորդի տեղադրումը խողովակի մեջ, դ. կտրոնի տնկումը)

Ամուր հողերում կտրոնները տնկվում են հատուկ պատրաստված ձողերի միջոցով (Նկար 13, ա): Հողի մեջ անցք է բացվում՝ ձողը գետնին հարվածելու և ուռնակով խորացվելու միջոցով: Կտրոնը տեղադրվում է անցքում, այնուհետև ձողի միջոցով անցքի կողքից հողը սեղմվում է կտրոնի ուղղությամբ և ոտքերով ամրացվում այնպես, որ անցքի մեջ դատարկ տեղ չմնա (Նկար 13, ա-դ):



Նկար 13. Ամուր հողերում տնկումը մետաղյա ձողի միջոցով (ա. մետաղյա ձողը՝ բռնակով և ուռնակով, բ. փոսի փորումը ձողով, գ. կտրոնի տեղադրումը փոսի մեջ, դ. հողի սեղմումը կողքից դեպի փոսը)

«ԳԵՏԵՐԻ ԱՓԱՄԵՐՁ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՅԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԔՈՎԻԴ-19-Ի ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏՆԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՂԵՑՈՒՅՑ



Հավելված 2. Միջոցառումների և տեսաֆիլմերի հղումները

«Պատասխանատու են Սևանի համար» 1-ին միջոցառում 20-ը մայիսի 2021թ.

<https://www.youtube.com/watch?v=WXZsTZDnG-Q>

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» Քովիդ 19-ի արձանգանքման միջոցառում- տեսաֆիլմ

<https://www.youtube.com/watch?v=SUe89Je0ahA&t=5s>

«Գետերի ափամերձ տարածքների վերականգնում Հայաստանում» Քովիդ 19-ի արձանգանքման միջոցառում- անիմացիոն ֆիլմ

<https://www.youtube.com/watch?v=hrc5LS4cJlU&t=10s>

«Թափոնարվեստ» ցուցահանդես-վաճառք Երևանի Բուսաբանական այգում, 21-ը մայիսի 2022թ.

<https://www.1lurer.am/hy/2022/05/17/%D4%B9%D5%A1%D6%83%D5%B8%D5%B6%D5%A1%D6%80%D5%BE%D5%A5%D5%BD%D5%BF-%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D6%81%D5%A1%D5%A4%D6%80%D5%BE%D5%A5%D5%B6-%D5%8D%D6%87%D5%A1%D5%B6%D5%A1-%D5%AC%D5%B3%D5%AB%D6%81-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A9%D5%A1%D6%83%D5%B8%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D5%BE-%D5%BA%D5%A1%D5%BF%D6%80%D5%A1%D5%BD%D5%BF%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%AB%D6%80%D5%A5%D6%80/723810>

<https://www.1lurer.am/hy/2022/05/21/%D4%B5%D6%80%D5%AF%D6%80%D5%B8%D6%80%D5%A4-%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6%D6%84-%D5%A9%D5%A1%D6%83%D5%B8%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%AB%D5%B6%D5%B9%D5%BA%D5%A5%D5%BD-%D5%A1%D5%B2%D5%A2%D5%A8-%D5%A4%D5%A1%D6%80%D5%B1%D5%B6%D5%A5%D5%AC-%D6%85%D5%A3%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80/726695>

«Ջանքերի միավորում հանուն Սևանա լճի» միջազգային համաժողով, 1-ը հուլիսի 2022թ.

<https://www.1lurer.am/hy/2022/07/01/%D5%8B%D5%A1%D5%B6%D6%84%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%AB%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%B4%D5%9D-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B6-%D5%8D%D6%87%D5%A1%D5%B6%D5%A1-%D5%AC%D5%B3%D5%AB/752903>



ENVIRONMENT, CLIMATE, OPPORTUNITIES
for people and nature

Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային
ծառայությունների պահպանություն Հարավային Կովկասում գյուղական
տարածքների կայուն զարգացման համար (ECOServe)

Հանրապետության 59, 9-րդ
հարկ 0010 Երևան, ՀՀ
Հեռ.՝ +374 (0)10 51 00 65
Էլ հասցե՝ ECOServe@giz.de
Կայք՝ www.giz.de; www.biodivers-southcaucasus.org

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ)